

Հայաստանի Հանրապետության պետական գնումների Էլեկտրոնային աճուրդների համակարգում առկա հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները

Մխիթարյան Խորեն Ա.
ՀՊՏՀ կառավարում ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու (Երևան, ՀՀ)
prof_mkhitaryan@yahoo.com

Կիրակոսյան Էդգար Ի.
ՀՊՏՀ կառավարում ամբիոնի ասպիրանտ (Երևան, ՀՀ)
edgarkirakosian@gmail.com

ՀՏԳ 334; EDN: CGJCWE; JEL: H57; C57

DOI: 10.58587/18292437-2023.2-132

Հանգուցաբառեր՝ պետական գնումներ, գնման գործընթացներ, էլեկտրոնային գնումներ, էլեկտրոնային աճուրդ

Проблемы в системе электронных аукционов государственных закупок РА и пути их решений

Мхитарян Хорен А.
Доцент кафедры управления АГЭУ, кандидат экономических наук (Ереван, РА)
prof_mkhitaryan@yahoo.com

Киракосян Эдгар И.
Аспирант кафедры управления АГЭУ (Ереван, РА)
edgarkirakosian@gmail.com

Аннотация. Государственные закупки всегда были в центре внимания многих заинтересованных сторон. Являясь гарантированным покупателем определенных товаров, работ, услуг, а также заказчиком для бизнеса, государство является более предсказуемым партнером, так как в процессе государственных закупок публикуется план закупок, заранее известны объемы товаров, работ, услуг и ориентировочные цены и др.

По сравнению с документационной закупочной системой система электронных закупок автоматизирует и значительно расширяет процессы закупок, от объявления до расчетов с поставщиками. В связи с вышеизложенным, в условиях современных стремительных технологических изменений внедрение системы электронных закупок в сфере государственных закупок, наряду с множеством преимуществ, повлекло за собой и определенные недостатки и риски. В рамках исследования указанной проблемы в статье были выявлены существующие проблемы в закупках электронном аукционе и на основе данных закупочной площадки предназначенной для электронных закупок. В частности, в ходе обсуждений с государственными заказчиками, участвующими в процессах закупок, и организациями участниками были зафиксированы определенные проблемы в процессах закупок, осуществляемых посредством электронных аукционов. В результате исследования было выявлено, что в процессах электронных аукционных закупок существуют некоторые риски приводящие к тупиковой ситуации, и предложены решения.

Ключевые слова: государственные закупки, процессы закупок, электронные закупки, электронный аукцион

The challenges and solutions in electronic auctions of public procurement system of The Republic of Armenia

Мхитарян Хорен А.
Associate Professor, Department of Management, ASUE, Ph.D. of Economic Sciences (Yerevan, RA)
prof_mkhitaryan@yahoo.com

Киракосян Эдгар И.
PhD Student of the Chair of Management of ASUE
edgarkirakosian@gmail.com

Abstract. Public Procurement has always been the center of interests of parties. Being as guaranteed buyer of some type of works, goods and services and interesting customer for usiness the country seems much more reliable partner as during the process of public procurement the procurement plan is published, the scales and the prices of works, goods and services are known in advance. In comparison with paper based system the electronic procurement system makes procurement process easier and provides opportunities for multiple procurement proceedings starting from the invitation publishing till the payments to suppliers. But at the same time due to current technological innovations while setting the electronic procurement system in public procurement system with many advantages there are seen some challenges and risks. During the examination of above mentioned issue in this article there have been discovered current challenges

based on procurement process done with e-auction and on the data of the platform that is intended for procurement process with e-auction. In particular some problems have been noticed during the discussions between parties- public customers and organizations about the procurement process done with electronic auctions system. After the examination of the problem there have been accrued some risks that seem to lead the procurement process to a deadlock during procurement process done with electronic auctions and have been suggested solutions to those.

Keywords: public procurement, procurement process, electronic procurement (e-procurement), electronic auction (e-auction)

Ներածություն

ՀՀ պետական գնումների համակարգը ներդրվել է դեռևս 2000 թվականին սկզբնապես հաղիսանալով որպես կենտրոնացված համակարգ: 2005 թվականին անցում է կատարվել մասնակի կենտրոնացված համակարգի: Հետագա զարգացումների շնորհիվ՝ 2011 թվականին, գնումների պետական համակարգն ամբողջությամբ ապակենտրոնացվել է: Գնումների ոլորտի ռիսկերը նվազեցնելու նպատակով, թե՛ ներպետական օրենսդրությունը, թե՛ գնումները կարգավորող միջազգային պայմանագրերը, վեր հանելով պրակտիկայի բացերը, մշտապես կատարելագործվում են: ՀՀ պետական գնումների համակարգի ներդրման պահից «Գնումների մասին» օրենքը փոփոխվել է չորս անգամ, իսկ 2017 թվականի ապրիլի 25-ից ուժի մեջ մտած և այս պահին գործող օրենքում մինչ օրս շուրջ վեց լրացումներ և փոփոխություններ են կատարվել [16.1]:

Էլեկտրոնային գնումների համակարգը գործում է Հայաստանի Հանրապետությունում 2012 թվականից և չնայած Էլեկտրոնային գնումների համակարգը կատարելագործելուն ուղղված մի շարք բարեփոխումներին՝ որոնց հիմքում դրվել են շուկայական տնտեսվարման սկզբունքները, այնուամենայնիվ պետք է նշել, որ գնումների համակարգում դեռևս առկա է ռիսկերի բարձր մակարդակ:

Գրականության ակնարկ

Հետազոտության շրջանակներում մանրամասն կերպով ուսումնասիրվել է թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականությունը՝ էլեկտրոնային աճուրդի իրականացման, պետական գնումների, քաղաքացիական իրավունքի, տնտեսագիտության վերաբերյալ աշխատություններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Գնումների մասին» օրենքը և իրավական այլ ակտեր: Չզայի հետաքրքրություն է ներկայացնում պետության կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների կազմակերպումը այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ, Ավստրալիան, Կանադան, Արգենտինան, Չինաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան և այլն: Ի.Գ. Ռզուևը և Վ.Վ. Ռզուևը, վերլուծելով ԱՄՆ գնումների դաշնային համակարգը (այսուհետ՝ ԳԴՀ)՝ կարծում են, որ այն անցել է պատմական ձևավորման երկար ուղի և աշխարհի ամենաարդյունավետ պե-

տական գնումների համակարգերից մեկն է հանդիսանում [11, էջեր 8-10]:

Ըստ Ի.Վ. Տուլցովայի ԳԴՀ հիմքում դրված հիմնական սկզբունքն է՝ պատվիրատուին առաքել լավագույն գնով, ճիշտ ժամանակին ապրանք կամ ծառայություն, միաժամանակ պահպանելով հանրության վստահությունը պետական քաղաքականության նկատմամբ [15, էջեր 31–32]: ԱՄՆ պետական գնումների գործունեության ընդհանուր համակարգում իրականացվում է Գնումների դաշնային քաղաքականության գրասենյակի կողմից (Office of Federal Procurement Policy), որը ստեղծվել է 1974 թվականին որպես կառավարման և բյուջեի դեպարտամենտի խորհրդատվական մարմին, իսկ 1988 թվականին դարձել է անկախ մշտական պետական մարմին:

Լ. Վ. Անդրեեվան նույնպես կարևորում է Միացյալ Նահանգների պետական գնումների զգալի փորձը, որտեղ 1948 թվականից «կառավարության» (պետական) կարիքների համար գնումների համակարգը ամրագրված է իրավական կարգով և ներկայումս Պենտագոնն օգտագործում է մինչև 50 տեսակի պետական պայմանագրեր [7]: Որպես կանոն զարգացած երկրներում գնումների համակարգի կայացման հիմքում դրված են տարիների փորձի վրա հիմնված և ճշգրիտ հաշվարկված իրավական կարգավորումներ:

Պետական գնումներ իրականացնելիս Միացյալ Նահանգներում գործում են հետևյալ 4 գնման ընթացակարգերը՝ բաց մրցույթ, երկփուլ մրցույթ, բանակցային և պարզեցված ընթացակարգեր [13]:

Բազմաթիվ հետազոտողներ հակված են այն կարծիքին, որ ԳԴՀ հիմնված է ճշգրիտ, մանրամասն, տարբերակված կարգավորման վրա, որը ներառում է պետական գնումների հիմնական գործառնությունները՝

- գնումների պլանավորում
- գնման պատվերի ձևավորում
- մասնակիցների ընտրություն և պայմանագրերի կնքում
- պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողություն և կարգավորում
- պայմանագրերի կատարողականի գնահատում

ԱՄՆ ԳԴՀ ներառում է բոլոր կարևոր տարրերը, որոնք անհրաժեշտ են գնումների գործ-

ընթացն արդյունավետ կազմակերպելու համար, մասնավորապես՝

- մանրամասն իրավական կարգավորում, որը ներառում է մի շարք օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր: Գլխավոր օրենքը Դաշնային գնումների համակարգի մասին օրենքն է:

- գործադիր, լիազոր մարմինների միջև լիազորությունների և պարտականությունների հստակ բաշխում

- զարգացած պլանավորման համակարգ
- գնումների իրականացման ընթացակարգերի և պայմանագրերի լայն շրջանակ
- տիպային պայմանագրերի արխիվ [14, էջեր 461-470]:

Հայաստանի Հանրապետությունում գնումների մասին իրավական ակտերը հրապարակվում են պաշտոնական տեղեկագրում՝ www.procurement.am կայքում, պետական գնումներին առնչվող տեղեկատվությունը հասանելի են հետևյալ պաշտոնական կայքերում՝ www.gnumner.am, www.armeps.am, և www.e-gov.am կայքերից:

Մասնագիտական գրականությունում նշվում է նաև, որ անհրաժեշտ է առավել բարելավել առաջարկվող մեխանիզմների արդյունավետությունը բիզնեսի և քաղաքացիական հասարակության հետ իշխանությունների փոխգործակցության համար, ինչպես նաև նոր արդյունաբերական քաղաքականության պայմաններում անհրաժեշտ է առավել բարելավել նորարարական ծրագրերը տնտեսական աճի նպատակային ցուցանիշների կայուն զարգացման համար [8, էջ 107]:

Պետության գնումների համակարգի գերակա նպատակը պետական միջոցների օգտագործման ժամանակ արդյունավետության և գնի ու որակի հարաբերակցության ապահովումն է, մինևույն ժամանակ ԵՄ պահանջներին և ազգային օրենսդրությանն ու քաղաքականությանը հետևելը: Արդյունավետության չափումը ձգտում է պատասխանել այլ հիմնարար հարցին, թե արդյոք գնումների համակարգը և գործարկումն ի վերջո իրականացվում է սահմանված հիմնական նպատակների համաձայն [21]:

Մի շարք հեղինակների մոտ (ցանկը ստորև կցվում է) էլեկտրոնային գնումների համակարգի արդյունավետության բարձրացման տարբեր մոդելներ են նշվում, սակայն գրեթե բոլորը գնման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առանձնացնում են միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթացի կազմակերպումը:

Հետազոտության մեթոդաբանություն

Հոդվածի նպատակը ՀՀ պետական էլեկտրոնային գնումների՝ մասնավորապես էլեկտրո-

նային աճուրդների համակարգում, առկա ռիսկերի, բացթողումների և խնդիրների ուսումնասիրությունն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացումն է:

Հոդվածում դիտարկվել են ՀՀ պետական գնումների համակարգի առանձնահատկությունները և ընդգծվել գնումների մասին ՀՀ օրենսդրական այն կարգավորումները, որոնք առնչվում են պետական գնումների էլեկտրոնային աճուրդների համակարգի աշխատանքին: Ելնելով հետազոտության բնույթից և առանձնահատկությունից՝ հոդվածում՝ ի թիվս այլոց, կիրառվել են համեմատական ուսումնասիրությունների, համալիր-համակարգային և դիտման մեթոդները, օգտագործվել են ընդհանուր գիտական վերլուծության, ընդհանրացումների և որակական եզրահանգումների եղանակները:

Բացահայտվել են էլեկտրոնային գնումների Armeps համակարգի արդյունավետության բարձրացման ոլորտում առկա հիմնախնդիրները, քննարկվել են ծրագրային խափանումներից զերծ առավել արդյունավետ համակարգի ներդրման նպատակները, իրագործման կարգը, մանրամասն ներկայացվել է արդեն իսկ խնդրի լուծումն ուսումնասիրած երկրների փորձը:

Էլեկտրոնային աճուրդի միջոցով կատարվող գնման ընթացակարգերում առկա խնդիրները մանրամասն վերլուծելու նպատակով ուսումնասիրվել են էլեկտրոնային գնումների Armeps և էլեկտրոնային աճուրդների (www.armeps.am/eaction) համակարգերի առանձնահատկությունները և բացահայտվել դրանց թերությունները:

Արժարժվող հիմնահարցերը ավելի տեսանելի դարձնելու պատճառով ներկայացվել են էլեկտրոնային աճուրդների կարգավորման մեխանիզմի կատարելագործմանն և պետական գնումների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկություններ:

Որպես հետազոտության օբյեկտներ են հանդիսացել ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացված գնման գործընթացները, գնումների ոլորտին առնչվող ՀՀ օրենքներն ու իրավական ակտերը, ինչպես նաև գնումների համակարգին վերաբերվող արտասահմանյան և հայ տնտեսագետների հրապարակած գիտական աշխատանքները: Որպես տեսական հիմք ուսումնասիրության համար ծառայել են օտարերկրյա փորձագետների հետազոտությունների արդյունքներն և հետազոտողների աշխատությունները, միջազգային կազմակերպությունների հետազոտությունների արդյունքներն ու հրապարակումները:

Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Կառավարության, ՀՀ ֆինանսների նախարա-

րության և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալները, ինչպես նաև վերը հիշատակված կառույցների էլեկտրոնային կայքերում տեղ գտած տեղեկատվությունը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են նաև սոցիոլոգիական, ինդուկցիայի, մեթոդները:

Վերլուծություն

Գնումների մասին օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենքներով նախատեսված պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, պետության կամ համայնքների հիմնարկները, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, հանրային կազմակերպություններն և միջառք այլ հիմնարկներ և կազմակերպություններ հանդիսանում են «պատվիրատուներ» [1, 2-րդ հոդված 1-ին կետ 1-ին ենթակետ]:

Պետական գնումները պատվիրատուներին հնարավորություն են ընձեռնում պետության անունից հայեցողական որոշումներ կայացնել գնման գործընթացների բոլոր մակարդակներում:

Հանրային գնումների կառավարումը՝ ընդհանրապես, իսկ էլեկտրոնային գնումների համակարգը՝ մասնավորապես, հետապնդում են հետևյալ հիմնական նպատակները՝

- թափանցիկություն՝ ներառում է գործընթացների կառավարելիությունը, հաշվետու լինելը, արհեստավարժությունը, արդարությունն ու հավասարությունը,
- արդյունավետություն՝ ներառում է գնման գործընթացների և արդյունքների արդյունավետությունը, փողի գնողունակությունը,
- գործարարության խրախուսում՝ ներառում է արդյունավետության և մրցակցության ապահովման ու կարողությունների և տեխնոլոգիայի կիրառման միջոցով գործարարության ու տնտեսական զարգացումը [4]:

Հանրային գնումների համակարգը կարևոր դեր է կատարում ցանկացած երկրի, այդ թվում նաև՝ Հայաստանի տնտեսության մեջ: Պետական գնումների համակարգի արդյունավետության և թափանցիկության բարելավումը կնպաստի մեր երկրի երկարաժամկետ և տևական տնտեսական զարգացմանը: Այդ պատճառով հարկավոր է վեր հանել պետական գնումների համակարգի թերություններն ու բացթողումները:

Գնումների մասին օրենքի 18-րդ հոդվածով սահմանվում են գնում կատարելու չորս ու ընթացակարգեր, դրանք են՝

- 1) էլեկտրոնային աճուրդը;
- 2) մրցույթը;

3) գնանշման հարցումը;

4) մեկ անձից գնումը:

Էլեկտրոնային աճուրդն (այսուհետ՝ նաև աճուրդ) էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ նոր՝ նվազեցված գների ներկայացման գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ավտոմատ գնահատման մեթոդներով (միջոցներով) որոշել հայտեր ներկայացրած մասնակիցների զբաղեցրած տեղերը՝ հաջորդականությունը [1, 18-րդ և 2-րդ հոդվածներ]:

Աճուրդի այս տեսակը անվանվում է նաև հոլանդական աճուրդ: Այն կատարվում է՝ սկզբնական հայտարարված գինն աստիճանաբար իջեցնելով:

ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն «*էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգը և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցուցակը հաստատելու մասին*» որոշմամբ սահմանված էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի 2-րդ կետով հաստատվել է, որ էլեկտրոնային աճուրդի համակարգը պարունակում է էլեկտրոնային սարքավորումներ, գործիքներ և ծրագրեր, որոնք հեռակարգավորման, հեռահաղորդագրման և էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանակման հնարավորություն են տալիս: Բոլոր սարքավորումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի կողմից սահմանված վայրում [3, 2-րդ կետ]:

Էլեկտրոնային գնումների համակարգն ունի հայտ ներկայացրած մասնակիցների տվյալները կողավորելու և մինչև հայտերի բացման պահին այդ տվյալների ապակողավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն [5, 6-րդ կետ]:

Պետական գնումների էլեկտրոնային աճուրդների համակարգի ուսումնասիրության ընթացքում առանձնանում են հետևյալ հիմնախնդիրները, մասնավորապես.

Մասնակիցների գրանցում - էլեկտրոնային գնումների գործընթացին մասնակցելու համար թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձիք գրանցվում են էլեկտրոնային գնումների <https://armeps.am/epps/> համակարգում:

Մուտքագրման բաժնում, համակարգը բոլոր գործածողներին (պայմանագրային պատվիրատու, տնտեսական օպերատորներ, ադմինիստրատորներ) տրամադրում է համակարգ մուտք գործելու հնարավորություն՝ օգտագործելով իրենց վավեր գործածողի անունը և գաղտնաբառը, ինչպես նաև լրացուցիչ տրամադրվում է տնտեսական օպերատորների (մատակարարների) համակարգում գրանցման ֆունկցիոնալությունը [6, 2.3.1 Մուտքագրման բաժին]:

«Գրանցվել իբրև մատակարար» հղմամբ անցնելով ստորև բերված պատուհան և լրացնելով պահանջվող տեղեկատվությունը (գծապատկեր 1) [17.1] երբեմն էլեկտրոնային աճուրդներին մասնակցելու համար «անբարեխիղճ» տնտեսավարողները վերոնշյալ համակարգում միտումնավոր լրացնում են ոչ ճիշտ տեղեկատվություն, փաստացի համակարգում ստեղծելով գոյություն չունեցող կազմակերպություն, հետագայում նույնականացումից խուսափելու համար: Էլեկտրոնային աճուրդին մասնակցելով թե գոյություն ունեցող և թե գոյություն չունեցող կազմակերպություններով հնարավոր է, աճուրդի ոչ բարենպաստ ելքի դեպքում, գոյություն չունեցող կազմակերպության միջոցով շատ ցածր գին առաջարկել, խուսափելով հետագայում պայմանագրի կնքումից և օրենսդրությամբ նախատեսված տույժերի (հայտի ապահովում) ներկայացումից: Բազմաթիվ են այն դեպքերը, երբ մասնակիցները օգտագործելով այս բացթողումը ձախողել են գնման գործընթացը հիմնականում անպատիժ մնալով: Նշված խնդիրը առավել անվերահսկելի է գնումը «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով՝ առանց տվյալ գնման համար նախապես հաստատված ֆինանսական միջոցների առկայության, իրականացվող գնման գործընթացների դեպքում, երբ օրենսդրորեն չկա պահանջ ներկայացնելու հայտի ապահովում [1, 15-րդ հոդված 6-րդ կետ]:

Ուստի այս խնդիրներից խուսափելու համար առաջարկվում է էլեկտրոնային գնումների գործընթացին մասնակցելու համար գրանցվելիս նշված համակարգում կցել ֆիզիկական անձանց դեպքում անձ հաստատող փաստաթղթի, իսկ իրավաբանական անձանց դեպքում պետական գրանցման սկանավորված փաստաթղթերը, որոնք կստուգվեն այդ փաստաթղթերը տրամադրող պետական մարմինների հետ:

Ինտերնետ կապի և Armeps կայքի ծրագրային խափանումներ – Էլեկտրոնային մրցույթը բարձրարժեք և փոքրածավալ գնումների կատարումն է՝ մրցույթ հայտարարելու միջոցով, որին հաջորդում են հայտերի ստացումը, գնահատումը և պայմանագրերի շնորհումը: Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրումը պահանջում է իրականացման և պահպանման համեմատաբար փոքր ներդրումներ, մեծացնում է թափանցիկությունը և ուժեղացնում կառա-

վարումը: Էլեկտրոնային մրցույթների համակարգը նախատեսում է՝

- մեկ ինտերնետ կայքում մրցույթների կազմակերպում և պայմանագրերի շնորհում, գործարարների առցանց գրանցում, առցանց որոնման միջոցներ,

- ինտերնետի միջոցով ազատ մուտք դեպի մրցույթի սկզբնական փաստաթղթերը, էլեկտրոնային հայտի ներկայացում մրցույթի մասնակիցների կողմից, պատվիրատուների առանձնահատկություններին համակարգը հարմարեցնելու տարբերակներ, մրցույթներ՝ իրական ժամանակում [4]:

Ինտերնետ կապի բացակայությունը և Armeps կայքի ծրագրային երկարատև խափանումները, նույնպես բարդությունների պատճառ կարող են հանդիսանալ, քանի որ էլեկտրոնային գնումների ողջ գործընթացը հիմնված է համացանցի վրա, իսկ ինտերնետ կապի բացակայության և ծրագրային խափանումների պատճառով մասնակիցները՝ առաջին դեպքում առհասարակ չեն կարողանում մասնակցել գնման գործընթացին, մյուս դեպքում մասնակիցների կողմից կցված գնման հայտերը կամ փաստաթղթերը չեն հասնում պատվիրատուներին:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման սկզբունքների և կանոնների համաձայն հայտարարությունը տեղադրվում է և պատվիրատուի էլեկտրոնային առևտրային հարթակում և, ըստ անհրաժեշտության՝ պաշտոնական էլեկտրոնային գնումների հարթակում, կամ պատվիրատուի երկրում լայն շրջանառություն ունեցող թերթերում, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության՝ պաշտոնական և միջազգային մասնագիտացված տեղեկագրերում [10]:

Միջազգային փորձն ուսումնասիրելիս հաճախ հանդիպում ենք նույն պետության ներսում գործող պետական գնումների իրականացման էլեկտրոնային գնումների հարթակների, որոնք սպասարկվում են տարբեր օպերատորների կողմից: Մեկ էլեկտրոնային գնումների հարթակի առկայության և այլընտրանքի բացակայության պայմաններում գնման գործընթացների մասնակիցները ստիպված են օգտվել պետական գնումների էլեկտրոնային հարթակից:

Քայլ 1. կազմակերպության մանրամասներ

* Կազմակերպության անուն

Ընկերության գրանցման համարը

* Հարկային կոդ

* Հարկային կոդի թողարկողը

* Հարկային կոդի թողարկող երկիրը

Հասցե

Փոստային կոդ

Քաղաք

* Երկիր

Էլ. եկամտային փոստ

Ջեռախոսահամար

Տարբ.

Կայք

Գործառույթի գրանցման համարը

Սեանձնահատուկ հ/հ

* Ինդրեմ ներմուծել ներքևում մ ցուցարկած կողք

Ընկերության գործու նեու թյ ու նը

Կիշերի աւվ. քանակը՝ 512:

Ըյ ու դայ ին հոլման համարը

Վավերացնել և շարունակել Վերագործարկել Լուծարել

* Ստորանիշով դաշտերը պարտադիր են

Գծապատկեր 1. Էլեկտրոնային գնումների համակարգում գրանցվելու նպատակով կազմակերպության կողմից լրացվող անհրաժեշտ տվյալներ

Սա ևս մի ռիսկ է, ուստի վերը նշված խնդրից խուսափելու համար առաջարկվում է ՀՀ կառավարության կողմից սահմանել կարգ և համապատասխան ընթացակարգերն անցնելուց հետո պայմանագրեր կնքել միաժամանակ Էլեկտրոնային գնումների հարթակների մի քանի օպերատորների հետ: Օրինակ կարող է հանդիսանալ Ռ-Դ գնումների փորձը, որտեղ Ռ-Դ Կառավարության կողմից Էլեկտրոնային գնումների հարթակների մի քանի օպերատորների տրամադրված է նման հնարավորություն [9, էջ 31]:

Էլեկտրոնային աճուրդով գնման գործընթացի օրենսդրական սահմանափակումները – Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները [2, 1-ին կետի 1-ին ենթակետ], հաշվի առնելով, որ հրավերով նախատեսվում է նաև, որ՝

1) աճուրդի ընդհանուր տևողությունը սահմանվում է 30 րոպե: Աճուրդի ընթացքում կատարվող յուրաքանչյուր քայլի արդյունքում նվազեցվող գումարը չպետք է պակաս լինի աճուրդն սկսելու պահին ներկայացված նվազագույն գնային առաջարկի մեկ տոկոսից: Եթե աճուրդի ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված 5-րդ րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա աճուրդը համարվում է ամփոփված, և վերջին քայլը կատարած մասնակիցը համարվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

2) Եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտն անբավարար գնահատվելու դեպքում գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա հայտարարվում է չկայացած:

3) աճուրդն ամփոփվելու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գնման հայտով սահմանված գինը, գնման ընթացակարգը օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած [3, 10-րդ կետ]:

Գնման մրցակցային այլ ընթացակարգերում՝ հրավերով սահմանված ժամկետներում, գնահատող հանձնաժողովը որոշում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, ինչը հնարավորություն է ընձեռնում պատվիրատուներին ընտրված մասնակցի կողմից համապատասխան պայմանագիրը կնքելուց հրաժարվելու պարագայում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին հայտարարել որպես ընտրված մասնակից և վերոգրյալին առաջարկել կնքելու հրավերի պահանջներին համապատասխան պայմանագիր:

Էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման դեպքում, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը գնահատվում է բավարար, ապա վերջինս հայտարարվում է ընտրված մասնակից, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են:

Քանի որ ընտրված մասնակից է ճանաչվում աճուրդն ամփոփվելու պահին նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը, նույնիսկ եթե նշված գնային առաջարկը վրիպակի արդյունք է, ապա գնման ընթացակարգում ոչ միայն հաղթող մասնակիցն է հրաժարվելու տվյալ գնման ընթացակարգին հետագա մասնակցությունից այլև վերոհիշյալ մասնակցի հրաժարվելուց չկայացած է հայտարարվելու գնման ընթացակարգը:

Այսպիսով գործող օրենսդրությամբ սահմանափակվում են հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասնակցության իրավունքը, ինչպես նաև Էականորեն բարդացնում են թե պատվիրատուների, թե գնումները համակարգողների և թե մասնակիցների աշխատանքը: Առաջարկվում է օրենսդրական և համակարգի կարգավորումներով ընձեռել հնարավորություն գնահատող հանձնաժողովին նմանատիպ իրավիճակներում որոշելու առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին, այսպիսով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի գնման ընթացակարգին հետագա մասնակցությունից հրաժարվելու դեպքում ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակցին:

Եզրակացություն

Շուկայական տնտեսության պայմաններում գնման գործընթացները՝ հատկապես բյուջետային ծախսերի արդյունավետությունն ապահովելու գործառնություն իրականացնելիս, ունեն կարևոր նշանակություն: Քանի որ պետական գնումները հիմնականում կատարվում են երկրի կառավարման, ներքին և արտաքին պաշտպանության, ինչպես նաև սոցիալական բնագավառների նյութական ծախսերը հոգալու համար: Վերոգրյալով է պայմանավորված օրենսդրական կարգավորման ոլորտի անընդհատ բարեփոխումները և արձանագրված դրական առաջընթացը: Կարևորելով շարունակական բարեփոխումներն, որոնք իրականացվում են պետության կողմից, այնուհանդերձ պետք է նշենք, որ դեռևս գոյություն ունեն բազմաթիվ խնդիրներ, որոնք խոչնդոտում են պետական գնումների համակարգի գործունեության արդյունավետությանը: Մասնավորապես.

- գնման գործընթացներին «անբարեխիղճ» տնտեսվարողների մասնակցության հնարավորությունը,
- մեկ էլեկտրոնային գնումների հարթակի առկայությունը և այլընտրանքի բացակայությունը
- էլեկտրոնային աճուրդով գնման գործընթացի կանոնակարգային ընթացակարգերի ֆորմալ պահպանումը, որոնց կիրառմամբ կասկածի տակ է դրվում որոշ գնումների արդյունավետությունը:

Այսպես՝ ՀՀ գործող գնումների մասին օրենսդրության հիման վրա իրականացվող գնման գործընթացները հիմնականում պահպանելով գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքները, այնուհանդերձ ունեն վերը հիշատակված թերությունները: Թիրախավորելով վերոգրյալ խնդիրները և հետևողականորեն լուծելով դրանք հնարա-

վորություն կրնձեռնվի ունենալ առավել օգտավետ էլեկտրոնային գնումների համակարգ, ինչն էլ կազդի գնման գործընթացների թափանցիկության բարձրացման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և գործարարության խրախուսմանը:

Բարձրացնելով գնման գործընթացի մրցակցության, հրապարակայնության և թափանցիկության մակարդակը, ժամանակին հայտնաբերելով գնումների համակարգի թերությունները և գտնելով դրանց լուծումները, ի վերջո կհասնենք պատվիրատուներին լավագույն գնով և ճիշտ ժամանակին ապրանքներ մատակարարելու, ծառայություններ մատուցելու և աշխատանքներ կատարելու նշանդին, ինչը կբարձրացնի հանրության վստահությունը պետական քաղաքականության նկատմամբ և էապես կնպաստի պետության կարիքների համար կատարվող գնման գործընթացների արդյունավետությանը:

Օգտագործված գրականության ցանկ

Օրենքներ և այլ իրավական ակտեր

1. «Գնումների մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 25.04.2017
2. ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշում գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին
3. ՀՀ կառավարություն 18 մայիսի 2017 թվականի N 534-Ն որոշումը էլեկտրոնային աճուրդի իրականացման կարգի և էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ցուցակը հաստատելու մասին
4. ՀՀ կառավարության էլեկտրոնային գնումների համակարգի ներդրման ռազմավարությունը հաստատելու մասին որոշում, 10.03.2006
5. ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշումը էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի մասին

Գրականություն

6. ARMEPS համակարգի տնտեսական օպերատորի գործաձողի ձեռնարկ, 12.12.2016 թ.

7. **Андреева Л. В.**, Закупки товаров и энергосервисных работ для федеральных государственных нужд, правовое регулирование 2-е изд., перераб. и доп, М., "Волтерс Клувер"
8. **Афанасьев М., Афанасьева Н., Кныш В.** Государственные закупки в рыночной экономике. Спб: СПбГУЭФ, 2004г.
9. **Борисова В. В.**, Международный Прокьюремент. Издательство Санкт-Петербургского государственного экономического университета, 2017 г.
10. Европейский банк реконструкции и развития, Принципы и правила закупок товаров, работ и услуг. Май 2010 г.
11. **Рзун И. Г., Рзун В. В.** Зарубежный опыт проведения государственных закупок услуг строительства // Научные труды Куб ГТУ, 2015. № 9
12. **Семенова Ф. З., Борлакова М. Б., Боташева Л. С.** Зарубежный опыт организации государственных закупок // Фундаментальные исследования. – 2016. – № 6-2
13. **Храмкин А. А.** Международный опыт построения системы госзакупок
14. **Akintoye A., Hardcastle C., Beck M., Chinyio E., Asenova D.** Achieving best value in private finance initiative project procurement. Construction Management and Economics, 2003, vol. 21, no. 5,
15. **Tul'tsova I. V.** Osobennosti funktsionirovaniia federal'noi kontraktnoi sistemy SShA [The features of functioning of the USA federal contract system]. Vestnik Akademii – Messenger of Academy, 2012, no. 3

Էլեկտրոնային հասցեներ

16. www.arlis.am
- 16.1. <https://new.arlis.am/am/acts/140973>
17. www.armeps.am
- 17.1. <https://armeps.am/epps/prepareRegisterEOOrg.do?registerEO=true>
18. www.gnumner.am
19. www.sigmaxweb.org
20. www.e-gov.am
21. http://www.sigmaxweb.org/publications/Brief%201%20Performance%20Measurement_ARM.pdf

Տճանա/Հանձնվել է՝ 10.03.2023

Рецензирована/Գրախոսվել է՝ 03.04.2023

Принята/Ընդունվել է՝ 18.04.2023